

ԲԱԺԱՆՈՐՈՒ ԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պուշկարիոյ համար  
Տարեկան 12 ռ.  
Վեցամսեայ 6 »  
Արտասահմանի համար  
Տարեկան 15 »  
Վեցամսեայ 8 »  
Անկախի համար  
Տարեկան 3 ռ.  
Վեցամսեայ 1.50 »  
ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵՐԻ

Մանուցանակ սոյոք ստացիկ  
Երեսին համար 40 սանթիմ.  
Իսկ վերջին երեսին համար  
20 սանթիմ. Ե. Երեսին  
անկախ կերպով համար  
20 Օլո գեղջ կրնայ:

# ՇՆԱՐԻ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱԶՄԱԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԵԲԵՐՔԻ ԵՒ ՇՆԱՐԻ ՕՐԵՐԸ  
Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Կամակ եւ դրամ դրկեյ  
Կամակ եւ դրամ դրկեյ  
«Шаржумъ»  
Варна.  
Redaction du journal  
«Charjourn»  
Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար ձեռքի  
(Գ Ի Ն 15 Ս Ա Ն Թ Ի Մ)

Արտասահմանի համար ձեռքի  
(Գ Ի Ն 20 Ս Ա Ն Թ Ի Մ)

## ՏԱՆՁՈՂ ՀԱՐՑԵՐ

Թուրքը նեղում է հայ ժողովրդին և ամէն ճիգ թափում երկրում սպառել նրան. զանազան հաւատորմներ ամեն միջոց գործ են դնում նրան որսալ ու այդպէսով ոչնչացնել, և աջողում են. հայութեան մէջ գտնվում են տարբեր, որոնք ոչ միայն ուրիշ քրիստոնեայ գաւառներին են ընդունում, այլ և թրքաւաններին կարծը, հայ ժողովրդի կեանքի պայմանները այնքան բարդիւն, խճճիւն են և այնքան կորստաբեր գոյն ստացել որ ամեն մի սրտացաւ հայ ինքն իրեն շարունակ և անընդհատ հարցնում է. ի՞նչ պէտք է լինի հայութեան ապագան: Եւ ճշմարտ, ի՞նչ պէտք է լինի մեր ապագան. այս միտքնած, արիւնտառ, ներկային հետեւող ապագան:

Ապագան ներկայի շարունակութիւնը է. ապագան կազմող ծիւղերը բունում են ներկայի մէջ. արդեօք մեր ներկայում լաւ ապագայ ստեղծելու ծիւղեր կան: Շատ քիչ հայեր կարող են կրտսերի և դրական կերպով պատասխանել այդ տանջող հարցերին, աչքի առաջ ունենալով մեր քառասուն ներկան:

Եւ իսկապէս ո՞վքեր և ի՞նչ մարմիններ ու հաստատութիւններ կարող են մեր գոյութիւնը ոչ միայն շարունակել տալ, այլ և աւելի բարեփոխել. հոգեւորականութիւնը—գրասիրաց արդէն յոյս չը կայ. տեսնում ենք թէ նա որչափ անկարող է հաւատորմների և բռնութեան դէմ մարտաւելու. դպրոցները—նրանք շատ քիչ են. շատ քիչ, բոլորովին անապահով և մեծ մասամբ անպէտք մարդկանց ձեռքում: Այս բոլորը ժողովուրդը տեսնում և զգում է. մանաւանդ վերջին սարսափելի տարիներում նա լաւ տեսաւ, թէ ոչ լաւ պատրիարքը և ոչ կաթողիկոսը կարողացան իրեն օգնել, ոչ պարոնները, ոչ ազանները և ոչ քահանաները: Թուրքը կոտորեց ամենայն ազատութեամբ, և ոչ ոք բռնեց նրա

ձեռքը. հաւատորմները հրապարակել իր զաւակները և ոչ ոք կարողացաւ նրանց արդիւնել. ու ժողովուրդը կամաց կամաց սկսեց համոզվել որ իր փրկութիւնը միմիայն յեղափոխութիւնից և յեղափոխական տարրից կարող է սպասել:

Այո՛, հայ ժողովուրդը շատ լաւ կերպով համոզվել է որ իր փրկութիւնը կարող է սպասել միայն յեղափոխութիւնից և յեղափոխական տարրից. նա համոզվել է որ իր ժողովրդային միւս հաստատութիւնները և գաղափարները անողոք են այս ճգնաժամային և վճռողական վայրկեաններում. բայց ի՞նչ արած, միւս կողմից զանազան ցած արարածներ, զանազան փթած ու մզլած ազգասէրներ, ամեն կարգի ու տեսակի ազգասէր շառւղատաններ, իրեն յեղափոխականներ երեւան են դալիս յեղափոխութիւնը բարձրացնելու քողով յեղափոխութիւնը ազատելու, ժողովրդի միակ և վերջին յուսալի տարրը արատաւորելու. գործում են մեծ ոճրագործութիւնը, ազգասպանութիւնը:

Հայ ժողովրդի խեղճ և միամիտ մասը, միմիայն զգացմունքի տարրը—այդ շառւղատաններին, փարիսեցիներին բարձրագոյն ազգայիններից կախարհվում է, ապուշ և ջղաձգութեան ցաւով տանջվող մարդկանց արատաւորներից յուզվում և հաստատում թէ հայոց «մեծիանքը եկել են»:

Ու փրկութեան նոր ճանապարհը գտնուած է:

Չէ՛, խեղճ, միամիտ, ջղային հիւանդներին յուշումներէից, արատաւորներից ազդվող, և ճշունամբան շարւղատաններից խաբվող հայ տարր, խաբում են քեզ գրանք. քեզ ծառայեցնում են իրենց սոտոր կրքերին, վերաբորված եսերին. հայութեան փրկութեան միակ միջոցը յեղափոխութիւնը է, ոչ խօսքով և ար-

տատուքով յեղափոխութիւնը, այլ գործնականը:

Եւ քո բարեկամը այն հայն է որ սատարում է այդ գործին, իսկ թշնամին նա, որ զանազան ձեւերով քանդում է այդ գործը:

### ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆ

#### ԿՐԿԻՆ ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆ

Մենք ժամանակին Շարժումի էջերու մէջ, տեղույս գաւառացի բեռնակիր եղբարց թշուառութեան մասին քանիցս շեշտած էինք, որ գործերու շրջութեանէ առաջ եկած էր, և միանգամայն գալիք աղետալի հետեւանք նախատեսելով հրաւր կարողացած էինք մեր ունեւոր դասակարգի աղաներուն, որ այդ թշուառութեան առաջին տունը համար, իրենց քանի մը ստեղծմանուէրներով օգնութեան հասնէին. բայց աւա՛ղ, մեր այդ հրաւրը միմիայն ձայն բարբառոյ յանապատի մնաց, և հիւշելի մը շարժումնակութիւն չունեցաւ. մինչև ցարդ Ծ ստեղծի իսկ տեղույս Սեղաւառին ամառ գործադիր մարմինն, իրեն նպաստ չտացաւ ո՛ր եւ չէ տեղէ մը, ապէ յետոյ ստանալիք ալ չունի: Այդ ցաւալի անտարբեր երեսոյթը, ցաւօք սրտի կատալ մեզ հարցնել թէ՛ եթէ՛ այդ հրաւրը մեր կողմէն եղած չլլար. այլ կարմիր գազանի կողմէն, արդեօք կրկին այս ձեւ անտարբեր պիտի գտնուէին, իրենց ամէն բանէ վեր սիրուած կլորիկ կարմիր ոսկիներն զոհելու մէջ. չէ՛ որ իրենք քաջալերական նպատակով թանկ քանի ամիսներ ստա՛յ, իրենց քաջաներու բերան բանալով, շտաշտար կարմրուկ կրկին թիւրք քոնսուլներու հայոց արիւնով ներկուած ճանկերու մէջ կը յեղուկէին, ևս առաւել այդ գազանի քաջալերելու, իրենց եղբարց հայրենիքի խորքերու մէջ յոշտելու. չը գլտեմ, այդ օգնութեան հանդէպ, ի՞նչ պատճառաւ չչուէ մը իսկ չերեւցաւ. արդեօք քանի մը գաւառացի բեռնակիր հայեր սովորած ըլլալէն ազատելու կարողութեան իրենց զոհութիւնը զոհելու համարեցին:

Կը կրկինեմ, տեղույս բեռնակիր գաւառացիները գրութիւնը անտանելի է, և կորուստ մե՛ծ. իսկ մարդասիրութեան հրաւր կը կարգաւորուշարտութիւնից այս կողմ գարձուներ. Սեղաւառին ամառ գործադիր մարմինը, մինչև այսօր տեղաւոր կրցաւ օրովան 300 արամ չոր հայ նպաստել, և հիւանդներուն ալ

բժշկութեան ամէն դիւրութեան միջոցներ չի խնայել. այժմ ալ անկարող է. 1000 ֆրանքէ աւելի պարաքի ներքեւ մնացած է, և այսօրեհետեւ տեղաւոր անկարելի է. որով ամայս 11էն սկսեալ իր նպաստը զարկեցուցած է. իսկ սրճարաններու անկիւններ 3—4 օրերով անօթիներ իրենց օրնար կողքան. հետեւանք շատ պարզ է, անմիջական մանով պիտի վերջանայ. գո՛նէ մինչև այսօր տեղս գտնուող քանի մը ազգեցիկ և պատուաւոր անհատներու շնորհիւ և ջանք մահ մը չի պատահեցաւ, և ամէն պէտքեր հոգացուեցաւ, ապէ յետոյ ալ չի պատահի, մինչև որ տեսնենք թէ վաղուան օրը ի՞նչ առաջ կը բերէ:

Պուրկոյ, 18 Ապրիլ

### ՓՈՒՇ ԿՈՒԼ ՏԱԼԸ ԶԷ

#### ԽՆԴԻՐ ԱՅԼ ՍԱՐՍԵԼՆ

«Նոննա՛նոյրիւն, շրջաւորիւն, շրջաւորիւն, շրջաւորիւն, շրջաւորիւն, շրջաւորիւն, շրջաւորիւն, շրջաւորիւն... ապա յեղափոխութիւն»:

«Մարտ»

Ճշմարտան ըսելով ես չեմ կրնար բարձրել թէ Մարտ իր այս իւրեքը ո՞ք տեղէն գաւառ ու իր այս նիւթը ո՞ր տեղէն ստացաւ. թէ ի՞նչ նիւթ է այս, և ուսկէ՞ ծնուած, այդ ալ չը գիտեմ. Ես այսքանը միայն գիտեմ թէ Մարտ իր այս ծիծաղելի քարոզութեամբ իր հեռուողները այն աստիճանի տըխմարացուցեց է որ, զժուարութեամբ կը ճանչնան իրենց նպատակն և ուղղութիւնը, սկզբունքն ու կոչումը. այնպէս որ եթէ ես ալ իմ խելքս Մարտի վտանգին դրած լինէի, մտաքիս ու զգացումներուս մեծագոյն մասը կը լինէր, հետեւ... իմ յոյսերուս մօտիկ, կամ անոր քովիկը, շարունակ խոտեր փրցունել, իմանալու համար քամիին ուրկէ գալը... Եթէ երբեք մենք կը ստեղծէ թէ Մարտ հակաիւղափոխական թերթ է, պատճառը այն է որ յեղափոխական թերթ չէ իր տխուր երեւոյթով:

Սյս աշխարհը թատերարեմ է. բեմ մը որ ամէն մարդ պէտք է մէկ դեր կատարէ—անշուշտ մարդն ալ իր դերը... բայց ի՞նչ ընենք որ Մարտին ինկած գերը տխուր է, Հայապանոցը գործունէութեան անստաւարակաւութիւնը. այդ ալ նման է այն մարդոց, որոնք կարծես լծացած աւազան են, կը նեխուին ու կը մնան. յօծար կամքով կանչարժանան, որպէս զի աստանկով լրջութիւն, խորամտութիւն և անսխալալութիւն անուան ստանան. — բայց որ բանան բերանին

ալ թող «չուն չի հաչէ»։ Շատ գիտենք անանկ մարդիկ որոնք «խելօք եւ անխալական» անուն են ստացեր, այն պարզ պատճառաւ որ բնաւ չեն գործեր, եւ որոնք, բոլորովին վստահ եմ, եթէ գործէին դատապարտութեան կարծանանային :

Գուցէ հարցունեն ինձ, միթէ Մարտի ալ... երկու թէ. ամբողջ աշխարհի մէջ մէկ մարդ—անշուշտ յեղափոխական մարդ—չկայ ալ որ այսքան անմիա խօսքեր խօսի. «խոհեմութիւն», լրջութիւն եւ հաշտութիւն» այս իմաստաւոր խօսքերը կը նմանին այն երկու ցորենի հատիկներուն, որոնք թաղանթաւ են երկու գործի յարդի մէջ, պէտք է ամբողջ օրով որոնես մինչեւ գտնես. երբ որ գտնես պիտի տեսնես թէ վնասելի ալ չէր արժեր :

Հապա՛ ի՞նչ ըսենք Մարտի այն անգործութեանը, որ շատ է, հազար անգամ շատ, քան գործունէութիւնը. լաւ գրութիւններ, լաւ արտասանութիւններ բանի չեն գար. աւելի լաւ կը լինէր որ քիչ մըն ալ գործողներ ու հետեւողներ ունենար, գոնէ իր ուղղութիւնով. — փուշ կուլ տալը չէ խնդիր այլ մարտնչի :

Եթէ գործելը նոյնքան դժուար լինէր, որքան ըսելը, ինչո՞ւ անգամ մըն ալ ինքը չի փորձուիր գործի սկսելու : Թուրք առածը կըսէ՝ «էկէր լաֆ ըլլա փիլաւ փիշակ, տէնիզ գատար եազ տա պէնտէն» :

Աւելի լաւ էր հիշ բան չըսել. բայց եթէ այսքանն ալ չըսենք, կը վախնանք թէ մի քիչ ալ ձերանայ գըլ-խընուս լալկան փիլիսոփայ գտնայ : Ինչո՞ւ կը ծիծաղէք, անանկ չէ. ոչ կարող է ընտրել իր ուղածը, ոչ չի մերժել չը սիրածը. նպատակս ծաղրել չէ. եւ ինչո՞ւ ծաղրել, Աստուած է ստեղծեր ան ալ, ծաղրելը մեղք է... բայց ան ալ իր ձեւը ունի. եթէ կը ծաղրեմ, անոր համար է որ «գէմքով սուրբ, սրտով սատանայ է» : Եւ ի՞նչ կը նշանակէ գէմքով սուրբ եւ սրտով սատանայ ըլլալ, եթէ ո՛չ, լարին ընտրել եւ չարը ի գործ դնել : Բայց ինչ մեղադրեմ, աշխարհ նաւ մըն է, իսկ մարդիկ նաւաստիներ, կան ջրի մկներ ալ, ցամաքի մկներ ալ. — ջրի ալ գողեր, ցամաքի ալ գողեր. սակայն ստանց խորհեցաւ գողերու մութ գոյնէն, հետեւինք քիչ մըն ալ անոնց գործ դրած սատանայականութեանը. վասնզի գի սատանան անոնց արմուկին տակն է. յանկարծ կը տեսնաս կապոցնին կապեցին ու բացուեցան. — ինչպէս եղաւ ասկէ առաջ—անշուշտ եւս միասին խորհուրդի չեմ նստած— ուրախ պիտի ըլլայի, եթէ սխալած ըլլայի—բայց տեսնենք, Հայու վաղմիւի եւ հնացած մէկ ստութիւն է այս. տեղի կուտան կանգնել այնպիսի մարդոց, որ իրենց գիտկին վրայ կանգնեցնուեն վստահ են, բայց այդ ամէնը չէ որ կը գոչէ սիրելի «լրջութեան» յաջողութիւն առաջին քայլ, առաջին խաբէյութիւն : Պատաւ կինն ալ սօսի կեղեկութիւն ու զեր է իր դրացիներուն հաւատացունել թէ իր չորրորդ ամուսնոյն մահուան վրայ կուլայ : Ի հարկ է Մարտի ընթացքով ի՞նչ որ կը կորցնէ հայ ժողովրդէն, ան կը շահի Սուլթանէն. թո՛ղ Աստուած գլուխէն վեր պահէ :

Աւերակցի

Ուստր, 17 Ապրիլ

—)(—

ԹՂԹԱՎՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՈԼԻՍ, 15 Ապրիլ

Ջատիկն ալ անցուցինք : Ի՞նչ է հայու Ջատիկը, հայու ամէն տօնիցը, ամէն ուրախութիւնները... Ամէն քրքրի մէջէն արցունքի կաթիլներ կերեւան, ամէն զուարճութեան աղաղակի տակէն թառաչ ու խուլ հեծկտոց կը հասնի լսել ու պոչի ազանջին :

Նազ ուրբաթ, թողման կամ ոչրի գիշերը Բերայի Երրորդութեան եկեղեցիին մէջը գողերը տիկինի մը գրպանէն կը հանեն դրամի քսակը, կինը աղմուկ կը բարձրացնէ եւ խիստ զբայուն ըլլալով, կը մարի :

Եկեղեցիի մէջ աղմուկ կը փրթի, «եկան կը ջարդեն» կը մտածեն ամէնքը եւ նոյն իսկ կը պոռան աս բառերը :

Եւ փախող փախողի եղաւ, զլորար ճղմելով, թոյլերը գուռերու ու սանդուխներու վրայ ոտնակոխ կոխկոտելով... :

Շատ կինք ու ժամպի լնկան, մէկ քանին թեթեւ վերքեր ստացան իրարանցումի տակնը :

Եւ ջարդի ուրաւականն է, որ երբէք չի հեռանար հայու աչքի առջեւէն, ինչպէս Սողոմոնի աչքէն չէր հեռանար իր զոհի Մեծ Գալիլիացու պատկերը... խեղճ հայ, քիչ տանջուեցա՞ր, որ հիմակ ալ ատ ցաւով կեփիս :

Կուզէի իմանալ, թէ Համիտի նխած հոգին ալ երբեմն ջարդի զարհուրանքներու պատկերներէն կայնկոծի. ինչպէս ցեխի ու աղբի ծով մը երկրաշարժէն սու փոթորիկէն... :

Գողիացիներու Ջատիկն օրն ալ, պատարագի տակնը, Բերայի Սանթա-Մարիա մեծ եկեղեցիին մէջ յայն գրպանահատ մը նորէն տիկնոջ մը քսակի հետ կուզէ ծանօթանալ մտերմօրար : Կինը ձեռք մը զգալով իր գրպանին մէջ՝ փաթեց մը կը փոսնէ... կինն ու օրհնուած նկարագիրն է աղմուկէ թիւնը... Աս կը ըլլայ փողոցի դուռնի քովերը, առաջին շարքերու մէջ. հապարտոր կիներ ատ աղմուկը կը մեկնեն ըստ իրենց երեւակայութեան եւ «Les Armeniens» (հայերը) կը հնչէ եկեղեցիի մէջ, փոխանակ լատին սոլօթքներու : Աս ամէն մարդ լինէր աղատելու կամ թագնուելու ճար մը կը մտածէ, Ծատերը կը մանեն երկար նստարաններու տակերը, իբր թէ յարձակում գործող հայ յեղափոխականներու հարուածներէն վերմ մնալու համար, շատերն զէպի դուռերը կը գլխին՝ աւելցնելով երկիւղն, անկարգութիւնը եւ աղմուկը :

Երրորդայիններն ալ կը վախնան հայերուն պէս, միայն մէկը կը վախնայ հայու յարձակումէն, մէկալը թուրքի... :

ԲԱԺ

ՊՈՍԿՈՆ, 15 Ապրիլ

Ամերիկայի հայ գաղթականութիւնը արեւելեան կոպտութիւնները տարիներէ ի վեր ծալած մէկդի նետած էր. փոյտի ու բառուցքի կօխ երկար տուն էր որ տեղի չէր ունենար : Մեծի շրջանը մեր կոշտ վարդապետներու հետ հեռացած էր այս երկրէն, բայց դժբաղարար այդ անտաշ վարդապետներէն ամենէն ապիկարը եպիսկոպոս ձեռնադրուելով հակառակ ժողովրդի կամքին հոս կը դառնայ ու կակտի կոպտութիւնը, աստիական բռնութիւնը կրկին ձեռք առնել :

Տարիներ առաջ Ստրաճեան Ուստրի վարդապետն էր. հնչակեաններ թէ այդ և թէ ամերիկայի ուրիշ հայաշատ քաղաքներու մէջ աղգային եռանդուն գործունէութիւն մը ցոյց կուտային : Ինական է որ ազատութեան հետապնդող ժողովուրդ մը պահ մը կը մոռնայ իր սեւ սիրտ սեւագլուխները մանուսնագ երբ այդ վեղարարները բնաւ չեն հետաքրքրուիր ազգին ցաւերովը : Ստրաճեան սրտմտած ամեն աեղ կը հարածէր հնչակեանները ու իր գործակառար ստրուկներու ձեռքով հրապարակային ժողով երը կը խառնալէր ծեծ ու կոխով : Ատով չի բաւականացած ինք անձամբ ստեղծեց Ուստրի անմուսնալի կոխը եկեղեցու սրահին մէջ. տակուին կը յիշեմ տեղական ամերիկեան թերթի մէջ ինչ նախատական յօդուածներ բեւան եկան ու ուսուրցի հայը ինչ նախատինքներ կրեց : Տեղական թերթերէն մէկը յօդուածի գլուխը խոշոր տառերով դրած էր «Ուստրի հայոց փարպապետը աթոռներով կը կոտի իր ժողովուրդի հետ», ու կը յառաջանար կարմիր դոյներով նկարագրել գէպքը եւ յօդուածը կը վերջացնէր հայերը կուռաւեր նկարագրի տէր ներկայացնելով : Աթոռներու վարդապետը աթոռներու եպիսկոպոսը դարձած՝ հոս կուգայ ու կուտի ճոթը կը փրթի Ուէսթ-Հոպօքընէն ուր հայերը ամենէն հանգաբառաւորոյ զընուած են :

Համառօտ մը պա՛ մեմ գէպքը : Ամերիկեան ի վեր Ուէսթ-Հոպօքնի մէջ եկեղեցի մը շինելու խնդիր մը կայ :

Ժողովրդի մեծ մասը կուզէ աղգային շէնք մը շինել որու մէկ մասը յատկացուի եկեղեցիի իսկ միւս մասը գործածուի իբրև գարոց լսարան են : Ստրաճեան եպիսկոպոս հակառակ է ժողովրդի կամքին երկու պատճառաւ. նախ սրովհետեւ գարոց շինելու գաղափարը ծնած է աղատամիտ երիտասարդներէ, որոնց մէջ Դաշնակցականներն ալ կան եւ պէտք է անպատճառ հակառակի դաշնակցականներուն. երկրորդ որովհետեւ գարոցը ժողովրդի ու շարժութիւնը իր վրայ կեդրոնա-

ցնելով վեղարարները ալ աչքի չառ չի պիտի զարնեն :

Վերջերս Ստրաճեան կայցելէ Ուէսթ-Հոպօքըն ու ներկայ կը գտնուի գարոց եկեղեցի շինելու համար ընտրուած յանձնախմբի կողմէ հրաւիրուած ընդհանուր ժողովին. իր կամքը առաջ տանելու համար յանձնախմբի ատենու պետ Պ. Չարչաֆեանի լծոյցաւրէր խօսիլ և մինչև իսկ բանի ուժ կուռէ գործածել, օրմէ երբ տասարդ մը գրգռուելով կը ցտակէ Ստրաճեանի մօրտ քէն կը բանէ ու կոխը կակտի :

Ահա խաղաղութեան ոււեսարանի մը որ խոսովութիւն կը սերմանէ :

ԼԵՈ

ՃՐՁԻ, 2 Ապրիլ

Վերջապէս, վատ արարածները՝ ուր որ ալ երթան իրենց վատութիւնները կը շարունակեն, բայց շատով գոյներնին դուրս կուտան : Ինչ շատ տարիներ շահացած, վատ արարածներէն մին՝ Նիւ-Եօրքի մէջ շարաշար կերպով կը գործէր իր վատութիւնները և յարատեւելու նպատակաւ իր փակ մտածումն էր թէ, ի՞նչ կերպով կրնար ապրուստ մը հայթայթելու համար՝ միջոց մը ձեռք բերել, առանց հայ երկրաստարգուլութեան զգացման զբաշխելու. որպէսզի իր վատ բնութեան գէմ խոշնջուտ չը հանդիսանան : Այս խաչագոյն էր Պ. Ռ. Թորոսեան, որը հաղար ու մէկ միջոցներու ձեռնարկեց իր ունեցած նպատակը յաջողցնելու համար. նպատակ մը՝ որը շահամոյններու յատկացեալ է : Սաներկայանալով իբր աղգաւեր մը ուղեց իր շուրջը հաւայել կարգ մը համախոհներ. ատոնց միջոցաւ կուզէր պայքար մղել ամեն անոնց գէմ որոնք իր քայլերը խափանել պիտի ջանային :

Այս պարտնը լաւ հատառու մը ըլլալով, լաւ գուշակած էր ընելիքը. սակայն ողջամիտ երիտասարդութիւնը շուտով զղաց այդպիսի բաղախնդրի մը իր մէջ սպիրտիցը, և շուտով արգիլեց անոր քայլերը : Պ. Թորոսեան նկատելով որ Նիւ-Եօրքը իրեն համար մեծ կուգայ, ուստի խորհեցաւ հեռանալ անկէ, և ուրիշ կեղեքովայր մը բնտրել իրեն, և յարմարագոյնը գտաւ Ուէսթ-Հոպօքնը, ուր կը գտնուի այժմ :

Եւ ի՞նչ. Հոպօքնը, քիչ առաջ արգէն խաչագոյնէ մը զլուած հայի հազ շունչ սկսեց էր առնել, որ այս պարտնը յաջորդեց անոր պակասը լրացնելու համար նախ դիմեց Ամերիկեան եկեղեցի մը, և անկէ խնդրեց որ տեղ մը տան իրեն, որպէսզի հայ գաղութը իր կորսուած հոս մը կը համարէր, հաւատքի բերեց : անա շահու աղբիւր մը, ուրկէ իր շարժականները կը վաղէն Անկէ վերջ սկսաւ իր իսկական

խաղը խաղալ . արդէն «Տիգրիս» 84 երրորդ թուին մէջ էր ստորագրութեամբ ծանուցած էր թէ «Աւետի-Չոպօքընի հայոց միացեալ հաստատութեան յատուկ արահին մէջ հայ մանկանց գրարոց մը բացած ըլլալով տեղւոյն բոլոր մանուկները կը հրաւիրէր այն տեղ ուսանելու» :

Ասկէ գիւրին է հետեւցնել թէ ինչպէս հաստատուած էր այդ հաստատութիւնը . եւ չեմ ուզեր կրկին մանրամասնութիւններու մէջ մտնել , հետաքրքրուողք կրնան տեսնել «Հայրենիք» ի 11 երրորդ թուին մէջ հերքումը , վասն զի «Շարժում» ի էջերը սուղ ըլլալուն չարժեք այսպիսի խնդիրներ յուշել : միայն իբր թեյադիւն մը հայ երիտասարդութեան , կը զգուշացնենք այսպիսի վատ արարածներէ :

«Շարժում» ի մէջ այս մասին ստիպեց գրել «Արմենիա» ի 51—52 երրորդ թուերու մէջ գրած յօդուածը (քունթեմա մը աչք կապուկ խաղացողները) վերագրով : Այս յօդուածին մէջ Պարոն մը բառախաղութեամբ կուգէ ժողովրդին բան մը հասկցնել . այսինքն այդ խաղազողի ներքին մարդը , որ արդէն երիտասարդութիւնը կը ճանչնայ չարի չկայ իր ընտանեքը մի բնա միջէ գրի առնուլ : միայն կը բաւականանամ Պարոն յօդուածագրին սա խօսքը յիշեցնել ընթերցողաց թէ «երբ կը տեսնեմ զաղափարի մը թաղուն կամ որ անեթին է սկզբունքի մը տարած լեւեան յաղթութիւնը» . Պարոն յօդուածագիրն ալ գիտնալով հանգընք քունթեման մը հետեւանքը , որը շատ մը երկայնաձեւութիւններու տեղի տուաւ , անամօթարար այդ քունթեման բառը , շուրջարթով Պարոն խաղազողի վրայէն վերջնելու համար կը յանդգնէր ուրիշ շատ մը անկեղծներու վրայ նետել , եւ իբր պառակալիչներ կորով մը զրգարանութիւններ կը տեղացնէ անոնց գլխուն ըսելով , «թէ Տէրութիտներու զեցիլն խանդարել ժողովրդ . սակայն գիտնալու ենք որ Պարոն մը ամբողջ անկեղծները «Տէրութիտ» անուանելով , չկրնար խօսակցութեան մը վաղ կը կոտրել իր թուեանտիջ և անիմաստ խօսքերով . երկադրենք թէ «Տէրութիտ» մը յանդգնած է իր բնին խօսք ուղղել ժողովին մէջ . չէ որ իր սխալը ճանչցնելու համար է եղեր , ինչու որ Պ . խաղազողը սովորութիւն ըրած է իր բնին , թէր այդ տեսակ առիթ մը կը ներկայանայ ժողովուրդը շահասիրելու համար , մասնաւոր անհատներու վրայ կը յարձակի . և ահա այն ատեն է որ այդ անկեղծ Տէրութիտը (իր անուանելով) կըսէ Պ . Թորոսեան անձնական յարձակում պէտք չէ» . արդեօք այս բանէն հետեւցուց որ Պարոնը Իշխակցական մըն է :

որեմն այն որ յանդգնի մէջ ին սխալները չգրեցնել Տէրութիտ մը պէտք է ըլլայ :

Պարոն յօդուածագիր , եթէ դու այդչափ կը յարգես այդ խաղազողը մենք կը հրաւիրենք մարդ մը որ բոլոր մանրամասնութիւններու տեղեակ սկիզբն մինչեւ վերջ , հաճի հրատարակ զալ լուսարանելու համար այն խնդիրները , որոնք մեզի ալ մութ մնացած են ցարգ : Այդ Պարոնն է «Ծիւղ Ուշտունի» , ստորագրութեամբ «Շարժում» ի թղթակից Աւետի-Չոպօքընին . այն ատեն մենք ալ կը հասկնանք եղելութիւնը գու ալ և խնդրոյն վերջ կը տրուի :

ՀԱՅԿ ԳՆՈՒՆԻ

ԵՐԵՔ ԳՈՅՆ (ԱԼԱՍՄԻ ԶՐՈՅՑ)

«Այո՛ , յուսնի յժգոյն շղիկն մեզ Հոնկոսի վրայ ճեւայ մեր երեք գոյնեռու վայրիլը» :

(Շար . նախորդ բիւլետեն վերջ)

Սպան իր հիւրնակալներէն լսածնուելէն առաջ , զիմակը վերցուց եւ երեւաց իր հայրենակիցներու յատուկ բիրտ ու զիր կերպարանքով . նա յայտնեց թէ իր եկած առաջի օրէն յափշտակուած էր Գաթէնիին գեղեցիկութեամբ եւ կուզէր ամուսնանալ ինչ որ ալ ըլլար եւ եթէ մէր ժուէր , բնութեամբ պիտի առնէր և ծնողացը սուղ պիտի նստէր իր արհամարուիլը :

Այս պաշտօնական յայտարարութեան յետոյ մեկնեցաւ , զժրազ ընտանիքին 15 օր պայմանաժամ աւելով , խորհրդածելու և իր պահանջներուն հնազանդելու : Բնտանիքի ամէն մէկ անդամը տարբեր մտաւանջութիւն ունեցաւ : Հայրը թէ և կը սիրէր Ֆրանսան , բայց ընդունած էր Գեորգիանակուն լուծը . ինչու ալ յոր արիւնքն չընդունէր նաեւ բարեկեցութիւնը եւ հարստութիւնը , մանաւանդ իր զաւկին հետ բաժնելու համար : Սպան հարուստ էր , աղէկը կը սիրէր , այդ գուշակած էին իր հայրական աչքերը . . . Այո՛ , կը սիրէր ոճի մը գործելու շափ , եթէ մերժուէր :

Տարբարող Գաթէնին կը ստեղծար այս բրտսիրացիներ ըլլալու մտքն , երբ կը մտածէր թէ ինք ուրիշն կը պատկանէր մշտապէս . չէ որ երդում էր կենաց և մահու մէջ հաստատութիւն առնոր . . .

Բայց ինչո՞ ձեռնարկները գրեցը այնքան խնամած էին . ինչ պիտի ըլլային եթէ յանկարծ անհետանար , բրտսիրացին զանոնք պիտի հալածէր . . . ալ ինք պարտաւոր էր ամեն զնով այդ հալածանքի առջեւը առնուլ :

Ամբողջ գիշերը մտածելէ վերջ , առաւօտուն իր որոշումը տուաւ ու զաղտնի պահեց :

Պայմանաժամի վերջին օրը՝ սոյան եկաւ պատասխան տաւալուչ Գաթէնին անխոռով զիմաւերց եւ յայտարարեց թէ պատրաստ է իր կինը ըլլալու , միայն ինչորով մէկ երկու շաբաթ սպասել որ ինք զանի ճանչնայ ու սիրի :

Սպան լսելով այս խօսքերը հեցաւ . Գաթէնին ծնողները չէին կրնար հաւատալ իրենց տկան զուարթնալէս փորձուցաւ իրենց աղջիկը , բրտսիրացիներու կատարի թշնամին , անմխիթար հարսնացուն . ուղեցին բան մը հասկնալ իրմէն , բայց չա վճողարար մերժեց :

Ամէն երեկոյ սպան կուգար Գաթէնինը զրօտանքի տանելու . Գաթէնինը բնորո՞ էր Հոնկոսի տիկերը ստարկ լով թէ՛ ամէն տեղէն աւելի կը սիրէր այն տեսարանները :

Բրտսիրացու սէրը հեղձեալ էր տաքնար . նա կը քանչանար անոր պարզ ճերմակ հագուստով . անոր կը թուէր թէ այդ անբիծ գոյնը շատ կը յարմարէր իր կապոյտ համազգեստին : Այն օրը , զոր Գաթէնին նշանակած էր Ֆրանցիկ համար իբր սուրք պղտուսնական սիրտանութիւններուն վերջ գնելու , գացին զետի աւելի սեպտեմբեր ամիսը . նոյն տեղը ուր Գաթէնին կը գուտած էր կիցսօմին՝ երբէք ուրիշինը չըլլալ . սպան սովորականէն աւելի գորովայն՝ Գաթէնինը բռնած էր համաբերու համար , եւ կը պաղտաւէր վերջապէս պատասխանել իր գրուածքներուն սիրոյ համար յոյժ մը :

Գաթէնին մտնելի պէս զժողովուրդ փորձեց ազատուիլ այս սրբապիղծ գրկախառնումէն , բայց չի կրնալով իր նպատակին հասնիլ , ինքը եւս գրկեց բրտսիրացին ու զոհաւորեց Հոնկոսի յատակը , պրտաւով «կիցսօմ սիրելի կիցսօմ քեզ կը միանամ , քու վրէժդ լուծելով» :

Այս ազգազակին անմիջական կերպով ուրիշ ազգազակ մը պատասխանեց՝ ամենամօտիկ թաւուսներէն . տոգոյն , վտիտ մարդ մը , Ֆրանսայի հետեակ գործերու համազգեստով , վաղեց զէպի ցից ժալոր եւ ինքն ալ գոհաւորեց պղծացող գետին մէջ :

Այն ատեն տեղի ունեցաւ տարբերակ երեւոյթ մը . Գաթէնինի ճերմակ զգեստը , կիցսօմի կարմիր բանթալոնը (որովհետեւ այս վերջինը կիցսօմ ինքն էր) եւ բրտսիրացին կապոյտ համազգեստը միանալով , պատկերացուցին Ֆրանսական զրօշակը , երբք զիակաները պատանքի մը պէս փաթաթելով . եւ այն ատենէն ի վեր կըսեն թէ ամէն սուրի . այդ քստմեկուցիչ ստամին տարեզարձին օրը , Հոնկոսի ջուրը կատանայ կարմիր , ճերմակ եւ կապոյտ գոյն , իրմե նշան բողբոջ յափշտակիչներու զէմ , որոնք իւրեցին իր Ֆրանսական ափերը :

Թարգմ . Ֆր . ՎԱՐԴԱՆՈՒՇ

ՈՒՄԱՆԱՀԱՅՈՅ ՊԱՏԱՍԻԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՕՏԵԼՈՅ

Կրեօք , թէ ինչ կը պատասխանեն մեր Ռուսներու ազգային անանց կարմիրու Հայաստանի կարօտանից մասին՝ երբ զիմէք իրենց և նկարագրէք Հայաստանի հայուն վիճակը :

Սման մենք ալ մեր ազգասիրը ունինք , պէտք է զանոնք հոգանք եւ ոչ թէ այնտեղիները : Եւ այս պատուական պատասխանը տալով մեր Ռուսներու հայ ազգայնոր զանոնք կազատեն . հայ Ռուսներու հայուն «մատամաները» է՛ , իրողք զանոնք զի նոքա միայն «Ֆանթազի» կը սիրեն . իսկ իրենց քոյրերը , երբէք . . .

Բայց Ռուսներու հայ երիտասարդութիւնը ինչ կրնէ որ երբէք չի խօսիր . արդեօք կը քննադատ թէ սա

ճշմարիտ առածին հետեւած է , որ կրնէ սխալմանը շունք չի հաչէր» եւ իրենց բնարանը դրած կը գործեն լուկ միջիկ . — ո՞ւր էր այդպէս ըլլար — սակայն կը տարակուսիմ եւս , որովհետեւ ինչպէս կը դիտեմ եւ կը տեսնամ , հետո՛ւ են , շատ հետու այդ ճանապարհէն . զի անոնք բոլորովին տարացած են . եւ ոչինչ չեն զգար հայրենիքի ու իրենց եղբարց մասին , եւ կրնան թէ «մենք հայ չենք այլ սուսններ ենք» . ունին կորստարքեր գողտփար մը յղացած իրենց ուղեգաց մէջ , եւ այն գողտփարով բոլոր Ռուսներու հայութիւնը զէպի կորուստ կը տանին — այս մասին «Երկշատիկ» պիտի գրեմ :

Ռուսներ այս ինչ յոյսով սպասենք . թէ Ռուսներու հայերն ալ իրենց ազգասիրութիւն ու եղբարցսիրութիւնները ցոյց տալով օգնութեան ձեռք պիտի կարկանդակեն այն ինչպէս որոն . որ երկու սուրին մէջ ինկած աղի — աղի արտասուելով օգնութեան կաղերսեն իրենցմէ : Այո՛ , գիտեմ ինչ յոյս չի կայ իրենցմէ . որովհետեւ իսրիւնք ալ իրենց ազգասիրութեան չեմ գիտեր թէ քանի՞ ազգաս կայ Ռուսներու հայոց մէջ — եւ պէտք է որ զանոնք հոգան ոչ թէ այն տեղիները . հայա՞ երիտասարդութիւնը , ո՛չ անոնք ալ «հայ չեն այլ կատարեալ ուսմաններ :

ԱՐՄԱՆԻՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Պատիւ տնի մը ծանուցանել արգոյ հայ հասարակութեան թէ , երկուսն Ռրտախում ընկերութիւնը՝ պրիլ մէկէն սկսած է իր ըստնեգիները և մասնաւոր նախընտրելով զանոնք և ընդունելով : Աստի հրատարակուած կը յայտարարեմք և իրայոյս եմք որ թէ սեպտեմբեր և թէ արտասահմանի ընդհ . հայութիւնը չի պիտի զլանան իրենց նիւթակուն և բարոյակուն աջակցութիւնը և օգնութիւնը , որովհետեւ ոչին պէ՛քք արդի ժամանակաւ անհրաժեշտ և վսեմներէն էն կարեւորագոյնն է . այն որ ի վերջին են որ պիտի կուզեն սպազայ հայութեան հաստատուն կուտանը :

Մնամք Յարգանք

Ի զիմաց դորձ . ժողովոյ երկուսն Ռրտախում ընկերութեան «Կատարականի»

Ատենադ պիւր Վ . Ատենապետի Յ . Կ . Ճանկիւղեան Յ . Բարսաւեան

Վ . Առնայ , 17 Ապրիլ

Հասցէ

Յ . Կ . Ճանկիւղեան

Վ . Առնայ (Պալկարիա)

Պէտք է տեղեցնել նաեւ ընկերութեան վերաբերիլն :

Յ . Գ . — Ընկերութեան կնիքը չը կրող ընկալադիրներու զճառասած ստակներու վարչութիւնը պատասխանատու չէ :

Նոյն

— ) ( —

ԸՆԹԵՐՅԱՍԻՐԱՅԻ  
ԸՆԹԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐ

Անցեալ կիրակի ըստ ազգա-  
բարութեան ընթերցասիրացի  
վարչութեան տեղի ունեցաւ ընդ  
ժողովը, որ կը բաղկանար հազիւ  
թէ 15—16 հոգիներէ. որով և  
հասկցուեցաւ թէ ինչքան ազգե-  
ցութիւն կընէ ընթ. վարչութեան  
հրաւերը իր բաժանորդներուն  
ժողովը բացաւ վարչութեան  
քարտուղարը և առաջարկեց ընտ-  
րել նահագան մը վարելու հա-  
մար զայն. պաշտօնական ձեւա-  
կերպութիւնը կատարուեցաւ և  
ընտրուեցաւ նախագահը և իր  
քարտուղարը. առաջին անգամ  
ընդհ. ժողովին ներկայացուեցաւ  
օրակարգը, որու առաջին նիւթը  
սա էր. թէ կարելի է վերստին  
ընտրութիւն մը ընելով վարչա-  
կան մարմին մը կազմել, որու  
գործունէութիւնը ապահովուած  
նկատուէր. այս առթիւ երկար  
խօսակցութիւններ տեղի ունեցան.  
նկատուեցաւ ցարդ եղած վարչա-  
կան մարմիններուն ընթացքը, ո-  
րոնց մէջ ամբողջ գործը կը  
ձգուէր միշտ ատենապետի կամ  
ատենադպրի մը վրայ, և անկա-  
րելի կըլլար համերաշխութիւն  
մը գոյացնել վարչական ժողովի  
բոլոր անդամոց մէջ, զազափարի  
անձնակաւն զանազան հակառա-  
կութեանց պատճառաւ, որոց  
համար պէտք չէ մանրամասնու-  
թեանց մէջ մտնել:

Նկատի առնելով թէ նոր վարչ-  
ական մարմին մը անպատճառ  
գարձեալ բռնելու էր իր նախորդ-  
ներու ընթացքը, առաջարկուե-  
ցաւ յանձնել ընթերցարանի  
վարչական գործը Պ. Միհրան  
Զգօնեանին միայն այն պայմա-  
նաւ որ նա պիտի առնէր իրեն  
համար օգնականներ իր կամքէն  
կախեալ. Միհրան Զգօնեան սոյն  
գործը պիտի ստանձնէր երբ քա-  
միս պայմանաժամով և ստի-  
պուած պիտի լինէր ի հարկին  
հաշիւ տալ ընկերութեան ընդհ.  
ժողովին. պարոնը ինքը ներկայ  
չէր բայց իր կողմէն մէկու մը  
տուած էր իր ձայնը, համաձայն  
գտնուելով անոր ամեն բանի հան-  
դէպ:

Այս խկապէս տարօրինակ ե-  
րևցաւ մէկ քանիններու և երկար  
վիճարանութիւններ տեղի ունե-  
ցան թէ զա պատիւ չէր բերեր  
Վառնայի երիտասարդներուն, թէ  
գործը միշտ միեւնոյն մարդոց  
ձեռքը պիտի ըլլար, թէ բռնա-  
պետութիւն պիտի գործածուէր  
և այլն և այլն. բայց ժողովական-  
ներու մեծ մասը համամիտ գրու-  
նուեցաւ սոյն առաջարկին և դէմ  
խօսողները մնացին շատ քիչ.  
պէտք եղաւ դիւանին հարցնել  
ժողովականները զատ զատ, որով  
ամբողջին ալ հաւանութիւնը առ-

նուելով ընդունուած նկատուեցաւ  
և արձանագրուեցաւ:

Միհրան Զգօնեանի հսկողու-  
թեան ներքոյ կը լինի այսուհե-  
տեւ ընթերցարանը. նա պիտի  
պատասխանատու լինի հանդէպ  
ամեն բանի. նա պիտի հիմնէ  
հոն ընթերցարանի մէջ գրչեթա-  
յին վարժարան ուսուցանելու հա-  
մար անուանելուն գիր գրել  
կարգալ և նոյնպէս հաշուել.  
Ի միջի այլոց պիտի աւանդուին  
Փրանսերէն, Հայերէն և Պոլիա-  
րերէն լեզուները և թուաբանու-  
թիւնը փոքր շրջանակներու մէջ.  
և զանազան դասախօսութիւններ  
պիտի տեղի ունենան Ազգ. պատ-  
մութեան առողջապահութեան  
վրայ և այլն և այլն. սոյն դասա-  
խօսութիւնները ամէնքն ալ պիտի  
ըլլան եթէ աշակերտներու թիւը  
ըստ բաւականի ըլլայ. այնպէս  
որ անուս և դպրոցական ուսումն  
առած հայը անկէ փոքրիկ շարա-  
թականով մը պիտի օգտուի ամէն  
տեսակէտով. ըստ մեր իմացածին  
սորվել աշխատիլ փափաքողները  
կրնան այսուհետեւ երթալ և ի-  
րենց անունները արձարագրել  
տալ ընթերցարանի մէջ:

Յաջողութիւն կը մաղթենք  
Պ. Միհրան Զգօնեանին:

ՄՈՒՐԱՏ-ՍՈՒՐԱՏ

Ն. Ա. Մ. Ա. Կ. Ա. Տ. Ո. Փ

Տէր Սարգիս քահանայ Ղարիպեան  
Պաթուճէն նամակ մը ստացած է ո-  
րով իրեն կազմաբաւոր թէ Արա-  
շէս Ղարիպեանի ընտանիքին յանձ-  
նելի Վառնայի մաքսատան մէջ կը  
գտնուի ընտանեկան գոյքեր. որոց  
համար մաքսային ծախս պէտք է  
վճարուի 50 ֆրանքէն աւելի. նա-  
մակի համաձայն յիշեալ անձի ազ-  
գականը կը գտնուի Ռուստուզ. ուստի  
կը ինքորուի որ այս անձը ուր է  
ինքզինք յայտնէ որպէս զի ստակը  
վճարելով ստանայ կահկարասիները,  
նկատի ունենալով որ հակառակ պա-  
րագային մաքսի սուրբը երթալով  
կաւելնայ:

ԿԸ ՓՆՏՈՒՄԻ. — Պարբերցի  
Քիտրիկ գիւղացի Պ. Յակոբ Զարան-  
եան մէկ տարի կամ վեց տմիս առաջ  
Պուրկազ քարին օճախը կաշխատէր  
եւ այժմ մեր քանի նամակներն ան-  
պատասխան մնալուն ուր ըլլալը չի  
գիտցուիր, ուր որ տեղեկութիւն ունի  
թող գրէ հետեւեալ հասցէին:

Արմենակ Ոսկերիչեան (Բղեցի)  
Թիւ 3 Ռիւլըր Սայիտ Փլիզ  
Քէյմպրիճփորթ մէս Ամերիկա  
— Եաշ, Պ. Արմաւիր. — Ձեր յի-  
շատակած յօդուածը չը պարզուեցաւ  
որովհետեւ ուշ հասաւ մեր ձեռքը եւ  
ժամանակը անցած էր:

Սլիվէնէն նամակ մը եկած է իւրմ-  
բագրութեան հասցէին եղբարց Ար-  
գար եւ Աւագ Սաթէնէսեանի (Թամ-  
զարացի) թող հաճին խմբագրութե-  
նէս ստանալ:

—(—)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Հայ օրերը խնամող գերմա-  
նական կօմիթէն իր Եօթերորդ  
նիստին մէջ որոշած է խնամել  
250 որբ ևւս. որովհետեւ Վանայ  
նահանգին մէջ մեծ թշուառու-  
թիւն կը տիրէ:

Ռ Ո Ւ Ս Ճ Ո Ւ Փ

Ռուսուզի մօտակոյ գիւղերէն  
մէկուն մէջ մեծ խառնակութիւն-  
ներ տեղի ունեցած են, ստի-  
կանապետ մը գանակոծուելով  
գիւղացի կիներէն փայտերով կի-  
սամեւ վիճակի մէջ փոխադրուած  
է Ռուսուզի հիւանդանոցը, զօր-  
քեր գացած են կարգը փրա-  
հատատելու բայց գիւղացիները  
անձնապաշտպանութեան կը դի-  
մեն ուստի ընդհարում կը ըլլայ.  
Երկու կողմէ եւս բաւական մեւ-  
եալներ կ'իյնան, մինչեւ իսկ  
սպաներէն մէկ երկու հոգի. կը  
խօսուի նաեւ որ երկու հատ սպա-  
ները գերի բռնուած են գիւղացի-  
ներէն:

ՍՐԿԱՅԻ ԴՈՒՔՍԸ

Հայոց Անգլիացի նշանաւոր և  
ազգեցիկ բարեկամներէն մէկն  
ալ մեռաւ. Արկայի դուքսն:

Զարմանալին այն է որ այգ-  
երեք նշանաւոր անգլիացիներու  
գործունէութեան վերջին շրջա-  
նը մեծ մասամբ հայկական խնդ-  
րոյն նուիրուած էր և երեքն ալ  
իրենց պաշտպանած հայ ազգը  
այն դժբաղդ վիճակի մէջ թող-  
լով վերջացուցին իրենց կեան-  
քը. Տեմենք Անգլիոյ մէջ ա-  
նոնց յաջորդող բարեկամներ  
պիտի ունենանք:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պօլսոյ զինուորական բժշկական  
վարժարանի մէջ տեղի ունեցած  
ցոյցին պատճառով 14 հոգի ու-  
ռանց գատավարութեան Սուլ-  
թանի հրամանով արտուեր են.  
Իսկ մնացեալները ազատ արձակ-  
ուած են. Սուլթանը հրամայած  
է որ գաղտնի վարկի վրայ յաւե-  
լում մը ըլլայ գաղտնի լրտեսնե-  
րուն վճարելու համար:

Կառավարութիւնը կը ձգտի  
նոյն միջոցներով, ինչպէս Վա-  
նայ նահանգի մէջ ըրաւ, Խար-  
բերդի և Տիարպէքիւրի հայերը  
խլամացնել:

Սուլթանը կաշխատի խորա-  
մանկութեամբ մը ամերիկացի-  
ները ետ կեցնել իրենց պա-  
հանջներէն. սլտեթադմական  
նաւ մը պատու իրելով ամերիկ-  
եան գործարանի մը, եւ այգ.  
գործը զլուխ բերելու համար Ա-  
մերիկա պիտի երթայ ամերիկ  
Ահմէտ փաշա:

Անգլիացիները ետ մղած  
են հարաւային կողմը արշաւած

պօէրները. զօրավար Փօլ Քարու  
հրամայած է գրաւել բոլոր ար-  
շաւները, ձիերը և ոչխարները  
այն օրանոցիներուն որոնք անձ-  
նատու եղած էին, բայց վերջիւ  
կրկին մասնակցած պօէրներու  
արշաւանքին: Փրաւած է նոյն-  
պէս բոլոր Մալգէրեան հրոցան-  
ները:

Օրանոցիները արդէն բոլորու-  
վին զլուսած են պատերազմէն և  
թրանսպարիներէն կը գանդա-  
տին:

Մեծ պայթում մը սեպի ու-  
նեցեր է Թրանսպարի Ետանէս-  
պուրգ քաղաքի զինային գոր-  
ծարանի մէջ, ուր միտրուած էր  
էր անձուխ վառօղը. սպան-  
նուածներ և վիրատուրածներ  
կան բաւական թուով: Գործա-  
ւորներու մեծամասնութիւնը  
Քրանոսցի և գերմանացիներ  
են:

Սուրբ փաշան սկսած է զի-  
նաթափ ընել Իփէքի բնակիչնե-  
րը, բայց կասկածելի է թէ պի-  
տի կրնայ շարունակել: Այպա-  
նացիներու ժողովը Փրիշթիայի  
մէջ գեւ կը շարունակուի:

Միացեալ Նահանգներու Սան  
Փրանչեսկօ քաղաքէն Թրանսպար  
մեկնած հիւանդապահներու  
խումբը Բրիտօրիա հասնելուն  
պէս իսկոյն զինուոր և միացեր է  
պօէրներու բանակին:

ԹԱՏՐՈՆ «ՍԱՆԹՐԱԿ»

«Վէսէլլօ» հայ դերասանական  
խումբը, այս գիշեր, Ապրիլ 22,  
առաջին անգամ ըլլալով պիտի  
ներկայացնէ «Ենթէր» թատերա-  
խաղ պատմական 5 արար:

Խիստ ծիծաղաշարժ զուեջտ 1  
արար:

Վաղը կիրակի գիշեր, Ապրիլ 23,  
առաջին անգամ ըլլալով պիտի  
ներկայացնէ «Վեցուկէս պօրէի  
ժառանգը» բարոյալից կասակա-  
խաղ երկու արարուած ազգային  
կեանքէ քաղուած հեղինակու-  
թիւն Բարեկիշատակ Գարեգին  
Ռչատուոյ:

Խիստ ծիծաղաշարժ զուեջտ 2  
արար:

Փորձի արուած է հայերէն լե-  
զուու «Աւան Զարուհի» որ մօտ  
օրէն պիտի ներկայացուի:

Ա Ձ Դ

Շարժումի խմբագրութեան մէջ  
կարելի է բաժանորդ գրուիլ Փարիզ  
հրատարակուող «Հայկական ժողո-  
վրդական երգերի հաւաքածոյին»:

Շոյիկար 6 համար պայմանները.  
Տոյիկար 6 համար 32 ֆրանք  
Կարելի է մաս մաս վճարել:  
Ա. գիրքը ստանալուն 12 ֆրանք  
Բ. գիրքը ստանալուն 10 ֆրանք  
Գ. գիրքը ստանալուն 10 ֆրանք  
Ա. Բ. մէկ գիրքը առանձին 6 ֆրանք